Արցախ. ճգնաժամը շարունակվում է

Հադրութ, 18 հունիսի. Խծաբերդ եւ Հին Թաղլար են վերադարձել մի քանի օր առաջ գյուղը թողած բնակիչները: Գյուղերում կան զինվորական հսկիչ կետեր, որոնք ապահովում են բնակիչների անվտանգությունը:

Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Արփագյադուկ գյուղերը առ այսօր թալանվում են ադրբեջանական խուժանի կողմից: Զինվորները չեն խոչընդոտում դրան, պատճառաբանելով, թե այդ մասին հրաման չունեն:

Դոլանլար եւ Խանձաձոր գյուղերի մոտ Ադրբեջանի օմոնականների հսկիչ կետեր են տեղադրված: Գյուղերում այլեւս ադրբեջանցիներ չկան:

Սիսիանից հաղորդել են, որ զինվորական ուղղաթիռով հունիսի 17-ի կեսօրին Արցախից տեղափոխվել են 17 ուղեւոր: Նրանց մեջ կային նաեւ երեխաներ: Ուղեւորները իջնելուց հետո ցրվել են տարբեր ուղղություններով, հնարավոր չէր պարզել, թե որ գյուղերից էին նրանք: Ստեփանակերտից եւ Հադրութից հաղորդում են, որ այդ մասերից տեղահանություն չի եղել: Այնպես որ զինվորական ուղղաթիռով եկած ուղեւորների հարցը մնում է չպարզաբանված:

Ասկերան, հունիսի 17. Երեկոյան Խոջալուի տեղամասում քարկոծվել է Ստեփանակերտ-Ասկերան ավտոբուսը: Վիրավորված վարորդը կորցնելով իրեն խփել է «ԿՐԱԶ» մակնիշի մեքենային, որի հետեւանքով 6 ուղեւոր ծանր մարմնական վնասվածքներ են ստացել:

Շահումյան, հունիսի 16. Հունիսի 16-ի լույս 17-ի գիշերը ընդհարում է տեղի ունեցել ադրբեջանական ՕՄՈՆ-ի եւ Բուզլուխ հայկական գյուղի բնակիչների միջեւ: Օգնության հասած զինվորները դուրս են շպրտել օմոնականներին գյուղի տարածքից: Կան սպանվածներ եւ վիրավորներ: Երեկ եւ այսօր գիշեր Շահումյանում համեմատաբար հանգիստ էր:

Մարզի մնացած շրջաններում դրությունը հանգիստ է: ■